ՀԵՐՈՍԱԿԱՆ ԴՐՎԱԳՆԵՐ ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻՑ (1994Թ. ՀՈՒՆՎԱՐ, ՓԵՏՐՎԱՐ)[1]

ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Բանալի բառեր - Արցախ, ԼՂՀ բանակ, Շուշիի գումարտակ, Ֆիզուլի, Օմարի լեռնանցք, Չիչազլիի լեռնազագաթ, ռազմաճակատ, գումարտակ, հենակետ, մարտավարություն, զինվոր, հարձակում, ծուղակ, հրասանդ, Գրադ կայանքներ

1993 թ. աշնանը ԼՂՀ բանակի ձեռնարկած մարտական գործողությունները չափազանց արդյունավետ էին: Բարոյալքված ու խուճապի մատնված ադրբեջանական բանակը, փաստորեն չկարողանալով ցուց տալ փոքր ինչ արժանի դիմադրություն, կրում է հերթական պարտությունը: Ադրբեջանի իշխանություններն երբեք չհամակերպվելով պարտության իրողությանը՝ ձգտում էին ռևանշի ու այդ նպատակով տենդագին քայլեր էին ձեռնարկում համալրելու և հզորանելու բանակի մարտաշարքերն ու ռազմական կարողությունները:

ԼՂՀ բանակի հետախուզության ձեռք բերած տվյալների համաձայն՝ թուրք հրամանատարությունը մարտական մեծ ուժեր էր կենտրոնացնում արցախյան ռազմաճակատի բոլոր ուղղություններում, այդ թվում նաև Աղջաբեդի և Ժդանովսկի շրջաններում, որտեղից նախատեսվում էր հզոր հարվածներով ճեղքել Արցախի պաշտպանների դիրքերը հարավային (Հորադիզ քաղաք-կայարան), հարավ-արևելյան (Ֆիզուլու շրջան, Հորադիզից հյուսիս-արևելք՝ դեպի Շուքյուրբեյլի--Ալխանլի հատվածը) և արևելյան (Մարտունու շրջանի հարակից ուղղությունը) ճակատներում և գրավելով Մարտունու ու Ֆիզուլու շրջանները՝ դուրս գալ դեպի Հադրութ և Ստեփանակերտ, իսկ հաջողության դեպքում՝ գուցե նաև Զանգեզուր ու Նախիջևան...

Լարված օրեր էին: ԼՂՀ բանակի հետախուզությունը գրեթե ամեն օր տեղեկություններ էր հաղորդում թուրքերի զինուժի նորանոր կուտակումների մասին: Այլևս ոչ մեկի համար գաղտնիք չէր, որ հակառակորդի լայնածավալ հարձակումն օրերի հարց է:

[1] Հոդվածը շարադրված է բացառապես Արցախյան ազատամարտի մասնակիցների վկայությունների հիման վրա:

Թուրք հրամանատարությունը հասցնում է քանակական գերակշռություն ստեղծել ռազմաճակատի բոլոր հատվածներում: Զգալի էր նաև ծանր զինատեսակների, հրասայլերի ու զրահամեքենաների գերազանցությունը: Միայն հարավարևելյան ռազմաճակատի ուղղությամբ (Ալխանլիից մինչև Հորադիզ) ադրբեջանական բանակի հրամանատարությունը կենտրոնացնում է երեք հետևակային բրիգադներ, որոնց բացի երեք հրասայլային գումարտակներից, հարձակումների ընթացքում պիտի աջակցեցին մեծ քանակությամբ հրանոթներ, հրասանդներ ու «Գրադ» կայանքներ: Հակառակորդի վերոհիշյալ ուժերին հարավ-արևելյան ճակատում դիմագրավելու էին Հադրութի գնդի երեք գումարտակները և Պետոյի գլխավորած Շուշիի առանձնակի գումարտակը: Ուժերի հարաբերակցության տարբերությունն անհամեմատելի էր:

1993 թ. աշնանային հաղթական գործողություններից հետո, Պետոյի հրամանատարությամբ գործող Շուշիի առանձնակի գումարտակը տեղափոխվում ու դիրքեր է գրավում Ֆիզուլու շրջանի Ալխանլի գյուղի մերձակայքում: Ռազմաճակատի պաշտպանության բնագծում Պետոյի գումարտակից ձախ՝ Ալխանլի գյուղի մոտակայքում, դիրքեր է գրավում Արթուր Աղաբեկյանի գլխավորած Հադրութի գնդի Ռիժիկի իսկ աջ կողմում՝ Վահեի, ապա Վահանի զորավաշտերը:

Գումարտակի պաշտպանական բնագծում հիմնական ուժերը՝ Վիտոյի գլխավորած վաշտն ու Էռնեստի կրակային դասակը չորս հիմնական հենակետերում տեղաբաշխված էին հետևյալ դասավորությամբ. 1-ին և 2-րդ հենակետերում դիրքավորվում են արարատցի Խաչիկ Զաքարյանի և քանաքեռավանցի Տիգրան Հարությունյանի, իսկ 3-րդ և 4-րդ հենակետերում՝ Էռնեստի և Մուրադի գլխավորած դասակները: 2-րդ հենակետի տեղամասում դեպի 1ին հենակետը նայող խրամատներում դիրքավորվել էին թալինցիների դասակի արեգցի Աղասու գլխավորած վեց ազատամարտիկներից (կարմրաշենցիներ Գևորգ, Հրաչ, բազմաբերդցի Հարութ, արեգցի Սամվել և թալինցի Ալբերտ) կազմված ջոկատը:

Բացի վերոհիշյալ ուժերից, Պետոյի տնօրինության տակ էր Հովիկի հրասանդորդների դասակը, պռոշյանցի երիտասարդ ազատամարտիկների ջոկատը, Ափոյան Անդրանիկի գլխավորած հրազդանցիների դասակը և մեկ Տ-72 հրասայլ:

Սպասվելիք ճակատամարտերը ծանր էին լինելու և բոլոր նրանք, ովքեր ծանոթ էին Շուշիի գումարտակի մարտական ներուժին, հարուստ կենսագրությանն ու հրամանատարական կազմին, ինչպես նաև զինվորների նվիրվածությանն ու անսասան ոգուն, չէին կասկածում, որ այս անգամ ևս գումարտակը գերազանց կերպով կկատարի առաջադրանքը:

Փետրվարի 5-ին, դեռ լույսը չբացված, թուրքերը հրետանային ուժեղ նախապատրաստությունից հետո, մեծաքանակ ուժերով գրոհում են Հադրութի գնդի Վահեի և Վահանի գումարտակների պաշտպանական դիրքերի վրա: Գնդի հրամանատար Արթուր Աղաբեկյանի հավաստմամբ՝ «…թուրքերն օգտագործեցին նոր մարտավարություն: Սահմանի մոտով մեր թիկունքն անցավ մի վաշտ: Առավոտյան, մի քանի կռիվներից հետո, պարզվեց, որ թիկունքից թուրքերն աշխատում էին փակել դեպի Վահանի և Վահեի դիրքերը տանող ճանապարհը: Խուճապ առաջացավ զորքի մեջ: Զորքերը ստիպված նահանջեցին մինչև Շուքյուրբեյլի: Պարսկաստանի սահմանի հատվածը մնացել էր անպաշտպան: Այդ մի քանի կիլոմետրը չէր հսկվում և թուրքերը կարողացան վաշտն անցկացնել մեր թիկունքը»:

Պարզվում է, որ ռազմաճակատի համար սպառնալիք է ստեղծել «անպաշտպան տարածքից» գումարտակների թիկունքն անցած թուրքական զորամասը: Ճիշտ և ճիշտ այդ նույն օրը համանման երևույթ է կրկնվել նաև հարավում՝ Հորադիզի շրջանում: Ռազմաճակատի այդ հատվածում ևս թուրքերին հաջողվել է դարձյալ «անպաշտպան տարածքից» Հորադիզը պաշտպանող զորամասի թիկունքն անցկացնել իրենց զորավաշտերը և արդյունքում հայկական զորքերը խուճապի են մատնվել ու առանց որևէ դիմադրության և կրակոցի՝ թշնամուն հանձնել ռազմավարական կարևորագույն նշանակություն ունեցող քաղաք-կայարանը:

Պետոյի գումարտակը հայտնվում է օրհասական իրավիճակում: Թուրքերը հսկայական ռազմական ուժեր կենտրոնացնելով և օգտվելով Վահեի և Վահանի գումարտակների նահանջից, կարող էին արդեն հեշտությամբ առաջանալ բաց տարածքից և աջ թևից շրջանցելով գումարտակի պաշտպանական հենակետերը, այն վերցնել շրջափակման մեջ:

Պաշտպանական երկրորդ դիրքեր գոյություն չունեին, ինչպիսի՞ ընթացք կունենային մարտադաշտում ծավալվող իրադարձությունները, եթե Պետոյի գումարտակը շրջափակման սպառնալիքից խուսափելու նպատակով իր հարևանների նման նույնպես փորձեր նահանջել: Վրա է հասնում այն ճակատագրական պահը, երբ Պետոն իր մարտական զինակիցներով պիտի կատարեր, հիրավի, պատմական նշանակություն ունեցող քայլ: Այժմ արդեն նրա գլխավորած զորավաշտերի հաստատակամությունից ու դիմադրողական կարողություններից էր կախված ռազմաճակատում ծավալվող մարտական գործողությունների ճակատագիրը: Այդ իրավիճակում Պետոն ավելի քան երբեք, տրամադրվում է դիրքերը մինչև վերջին ուժն ու փամփուշտն աներեր պաշտպանելու ու թշնամու գրոհները ջախջախելու վճռականությամբ: Նույն ոգով ու հաստատակամությամբ էին համակված գումարտակի բոլոր մարտիկները, որոնք անվերապահորեն

հավատում էին իրենց հրամանատարին, նրա ընդունած վճիռների ճշմարտացիությանը:

Հունվարի 5-ի առավոտյան, երբ լույսը դեռ չէր բացվել, թուրքերի հետևակը հրասայլերի աջակցությամբ գրոհում է Պետոյի գումարտակի դիրքերը՝ 3-րդ և 4-րդ հենակետերի ուղղությամբ: Քանի որ աջ թևն արդեն լրիվ բաց էր, ուստի թուրք հրամանատարությունը ձգտում է մեծաքանակ ուժերի հարվածներով հաղթահարել պաշտպանության այդ հատվածում դիրքավորված բուժականցի Մուրադի գլխավորած մարտիկների ու Էռնեստի կրակային դասակի դիմադրությունը և շարժվելով ռազմաճակատի խորքը՝ արցախյան ուժերի նկատմամբ ձեռք բերել դիրքային վճռական գերակշռություն: Հապաղելու ժամանակ այլևս չկար: Անհրաժեշտ էր եղած ուժերով փակել աջ կողմում առաջացած ճեղքվածքը և արագ տեղաշարժերով ու անսպասելի հարվածներով խափանել գումարտակը շրջափակելու թուրքերի փորձերը: Պետոյի հրամանով ռեզերվում գտնվող ուժերը՝ Մուկուչի, Անդոյի դասակներն ու Հովիկի գլխավորած պռոշյանցիների և հրասանդորդների միացյալ ջոկատն արագորեն շարժվում են գումարտակի աջ կողմը՝ դիմագրավելու այդ ուղղությամբ առաջացող թշնամուն:

Փաստորեն ստեղծված իրավիճակում, նաև Վահանի զորավաշտերի նահանջելուց հետո, Պետոյի գումարտակը հարկադրված արդեն պիտի զբաղեցներ քառապատիկ ավելի երկարություն ունեցող տարածք, որի հուսալի պաշտպանության համար գումարտակի ունեցած սահմանափակ ուժերն ու միջոցները բացարձակ անբավարար էին: Բայց ուրիշ ելք չկար:

«Մենք, - ասել էր Պետոն Մուկուչին, - իրավունք չունենք նահանջելու, և դիրքերը թողնելու ոչ մի քայլ չենք անի, քանի դեռ համապատասխան հրաման չլինի: Եթե պետք է, մենք այստեղ կկռվենք մինչև վերջին հնարավորությունն ու կզոհվենք»:

Վաշտի հրամանատար Վիտոյի ուղեկցությամբ Պետոն գալիս է գումարտակի աջ թևը և տեղում մեկ անգամ ևս քննարկելով ստեղծված կացությունը՝ վճռում է կազմակերպել շրջանաձև պաշտպանություն և դիմադրել մինչև օգնական ուժերի տեղ հասնելը: Դա տվյալ իրադրության մեջ թերևս միակ անհրաժեշտ ու հնարավոր վճիռն է, որի հմտորեն կենսագործելու դեպքում գումարտակին հնարավորություն կընձեռվեր, գոնե ժամանակավորապես, հաջողությամբ կասեցնել թուրքերի գրոհները՝ մինչև ռազմաճակատում իրադրության կայունացումը:

Նույն օրը թուրքերը ձեռնարկում են ուժգնությամբ նախադեպը չունեցող լայնածավալ զանգվածային հարձակումներ գումարտակի պաշտպանության ողջ երկայնքով: մենուրեք հրասայլեր էին, զրահամեքենաներ ու քառաշարք հարձակվող հարյուրավոր թուրք զինվորներ: Պետոն հան-

գիստ ու սառնարյուն դիտելով թշնամու գրոհող զորաշղթաները և ճշտորեն գնահատելով պահը՝ տալիս է հարվածելու հրամանը:

Կապը բոլոր հենակետերի միջև գործում էր անխափան: Գումարտակի առաջին հենակետից մինչև պաշտպանական նոր բնագծում դիրքավորված զինվորները, իրենց հրամանատարից ոչ պակաս հանգստությամբ ու սառնասրտությամբ, զենքի բոլոր տեսակներից կրակե հեղեղ են տեղում թշնամու գրոհող զորաշարքերի վրա:

Թուրք հրամանատարությունը, որի շարքերը համալրված էին նաև օտարերկրյա վարձկան զինվորականներով՝ հաշվի չառնելով իրենց սպանված զինվորների մեծաքանակությունը, զենքի սպառնալիքով նորանոր զինավաշտեր էր քշում մարտադաշտ: Հունվարյան կռիվների ժամանակ թուրքերն անցնում են մինչ այդ դեռևս չկիրառված նոր մարտավարության: Որպես կանոն, հարձակվելիս գործելով 3-4 զորաշղթաներով՝ թուրք հրամանատարությունը վերջին շղթան համալրում էր պատժիչների խմբերով, որոնց հիմնական խնդիրը նահանջելու կամ խուճապի պահին փախչելու փորձ անողներին գնդակահարելն էր: Նման դաժան միջոցների կենսագործմամբ Ադրբեջանի իշխանությունները ձգտում էին այս անգամ վերջնականապես ծնկի բերել ԼՂՀ պաշտպաններին: Մահվան սարսափից մթագնած թուրք զինվորների գրոհները չթուլացող սաստկությամբ հաջորդում են մեկը մյուսին: Սակայն իզուր էին նրանց ջանքերը: Երկաթյա հաստատակամությամբ պաշտպանվելով, գումարտակը ջախջախիչ հարվածներով հետ է շպրտում իր դիրքերը ճեղքելու փորձ ձեռնարկող թուրքերի գրոհները:

Կռիվների առաջին օրը թերևս ամենածանր ու ամենապատասխանատուն էր: Առանց դադարի, կիսաշրջափակված վիճակում գումարտակի մարտական ուժերը հրաշալի քննություն են բռնում: Անգամ գերազանց մարտական որակներ ու կամք են դրսևորում նաև այն զինվորները, որոնք առաջին անգամ էին մասնակցում նման ահեղ գոտեմարտերի: Այդ օրը Պետոն գործում էր բազմապատկված ուժով ու եռանդով: Հմտորեն ղեկավարելով իր զորաջոկատների գործողությունները՝ նա հայտնվում է ամենաշիկացած կետերում, ոգևորում ու ուղղություն տալիս զինվորներին: Կռիվների մասնակիցների միահամուռ կարծիքով՝ դիրքերում նրա հայտնվելը ոգեկոչում, հզոր ուժ ու հանգստություն էր ներարկում իրենց շարքերում: Իսկ երբ այդ մարտերում առաջին անգամ մարտական մկրտություն ստացած տղաներին հարցնում էին, թե ինչպե՞ս պատահեց, որ այդ ահավոր դժվարին պահերին իրենք երբեք չփորձեցին նահանջել, նրանք պատասխանում էին միանշանակ. «Ինչպե՞ս կարող էինք նահանջել, երբ մեզ հետ Պետոն էր», կամ երբ հետաքրքրվում էին. «Տղերք, ո՞նց եք», դարձյալ հնչում էր միակ պատասխանը. «Մեզ ի՞նչ կա, Պետոն մեր թիկունքում կանգնած է»:

Տղաների միասնական կարծիքով՝ կռիվների հենց առաջին օրը թուրքերը իրենց գումարտակի դիրքերում թողեցին ավելի քան 300 դիակ:

Նկատի ունենալով, որ հետագա մարտերում հակառակորդն իրենց դիրքերի ուղղությամբ անխուսափելիորեն օգտագործելու է հրասայլեր ու զրահամեքենաներ և կանխատեսելով հակառակորդի կողմից ձեռնարկվող հարձակման հնարավոր ուղղությունները՝ Պետոն վաղօրոք խնամքով կազմակերպել էր ականապատման աշխատանքները:

Հասկանալով, որ ճակատային գրոհներով անհնարին է խորտակել հայ զինվորների պաշտպանական դիրքերը, թուրք հրամանատարությունը փորձում է մարտական ուժերը տեղափոխել հարավ և այնտեղից հարձակումներ ծավալելով՝ աքցանի մեջ վերցնել այդ ուղղությունում մարտնչող ղարաբաղյան ուժերը:

«Այդ օրերին, - շարունակում է Մուկուչը, - թուրքերը Ալխանլի գյուղից երեք շարքով գալիս էին: Նրանք մեզանից 1.5 կմ. հեռու էին գտնվում, այդ պատճառով ինքնաձիգներով չէինք կարողանում աշխատել: Գալիս հասնում էին «Չերդակ» կոչվող տեղը և այնտեղից ոտքով, շարք կազմած ու մեր դիմացի դաշտի միջով գնում էին դեպի հարավ, այսինքն՝ ուժերը տեղափոխում էին մեր աջը, որպեսզի մեզ փակեն օղակի մեջ:

«Մենք նրանց լավ տեսնելով զժվում էինք, թե ոնց կարելի է, որ մարդիկ այդպես, առանց քողարկվելու տեղափոխություն կատարեին, իսկ մենք փաստորեն չէինք կարողանում խփել, ինքնաձիգը չէր հասցնում»:

Կիսաշրջափակման մեջ աննահանջ մարտնչող տղաների գլխավոր զենքը թերեւս անկոտրում ոգին էր եւ թշնամու հոծախումբ գրոհները ջախջախելու կամքն ու վճռականությունը: Գումարտակի պաշտպանության բոլոր հենակետերում ընթացող անընդմեջ մարտերի շարքը հիրավի մի կատարյալ հերոսապատում է: Ահա մի փոքրիկ դրվագ. թուրքերի ազատ տեղաշարժերը խոչընդոտելու նպատակով բուժականցի Մուրադը տեղափոխվում է մի փոքր առաջ՝ «Հրասայլի խրամատ» կոչվող դիրքը եւ դիպուկ հարվածներով գետին փռելով մի քանի թուրքերի՝ այդ մասին ռադիոկապով հաղորդում է հրամանատարին: Լսելով Մուրադի հաղորդածը՝ Պետոն կռվի թոհուբոհի մեջ ուրախ կատակով պատասխանում է. «Շատ լավ է, դրանց հայրենիքը չի մոռանա, իրենց համար էլ մի պուլպուլակ կպատրաստեն»:

Ուշադրությունը բևեռելով գլխավորապես աջ թևում ընթացող մարտական գործողությունների ղեկավարմանը՝ Պետոն ստիպված էր ժամանակի զգալի մասը անցկացնել հենց այդ ուղղություններում: Նրա հրահանգով կենտրոնում մարտնչող տղաներին օգնության եկած հրազդանցի Մհերը ընկերներին ոգևորելու դիտավորությամբ դիմում է վաշտի հրամանատար Վիտոյին և առաջարկում միասին երգել: Մհերի և նրան ձայ-

նակցող վաշտի հրամանատարի կատարմամբ «Ելի՛ր, դու քաջ Դրո, բազկիդ ուժը բեր» երգի հնչյունները թևածելով տարածվում են պաշտպանության գրեթե բոլոր դիրքերում: Թուրք զինվորների ռռնոցների ու տարբեր տեսակի զենքերից թնդացող խլացուցիչ ձայների մեջ առասպելական հերոսին ձոնված երգի կատարմամբ ոգեշնչված զինվորները՝ նոր ուժ ստանալով՝ կրկնապատկում են իրենց հարվածների ուժգնությունը:

Երգն արդեն մոտենում էր ավարտին, երբ այդ նույն դիրքերի ուղղությամբ, այս անգամ արդեն հետեւակի ուղեկցությամբ, հայտնվում է թշնամու եւս մի հրասայլ: Կապվելով հրամանատարին՝ Մհերը հաղորդում է. «Պետո՛, հրասայլ է գալիս, ի՞նչ անենք»: Իսկ նա հանգիստ ու սառնարյուն պատասխանում է. «Ինչ ուզում ես, արա՛: Ուզում ես, խփի՛ր, կամ բաց թող, մենք կդիմավորենք»:

Ընդամենը 300 մետր էր մնում, որ հրասայլը ներխուժեր խրամատներ: Դարձյալ աշխատում է ականապատ դաշտը, լսվում է ականի պայթյունը, եւ նույն պահին դիպուկ նշանառությամբ հրասայլի աշտարակին են հարվածում նռնականետներից արձակած նռնակները: Ջարդուփշուր եղած մեկ հրասայլ եւս վերածվում է մետաղաթափոնի:

Մեծ կարեւորություն տալով ռազմաճակատի այդ հատվածում ղարաբաղյան զինավաշտերի դիրքերը անպայմանորեն խորտակելու անհրաժեշտությանը՝ թուրք հրամանատարությունը վճռում է չխնայելով ուժերը՝ հարձակումը շարունակել նաեւ գիշերը: Այդ օրերին տեղացող անձրեւախառն ձյունը եւ ցուրտը անտանելի իրավիճակ են ստեղծում օրեր շարունակ դիրքերում գտնվող զինվորների համար: Պետոն մշտապես զինվորների կողքին էր, կռիվների ամենաթեժ կետերում:

Մեծ կարևորություն տալով ռազմաճակատի այդ հատվածում արցախյան զինավաշտերի դիրքերն անպայմանորեն խորտակելու անհրաժեշտությանը՝ թուրք հրամանատարությունը վճռում է չխնայելով ուժերը՝ հարձակումը շարունակել նաև գիշերը: Այդ օրերին տեղացող անձրևախառն ձյունը և ցուրտը անտանելի իրավիճակ են ստեղծում օրեր շարունակ դիրքերում գտնվող զինվորների համար: Պետոն մշտապես զինվորների կողքին էր, կռիվների ամենաթեժ կետերում:

Վերհիշելով այդ լարված ու անքուն գիշերներով հագեցած օրերը՝ թալինցի Սաքոն նշում է. «Պետոն միշտ մեզ հետ էր, մեր թիկունքին, իսկ կռիվների պահերին մեր առջևում էր...»:

Կարծես լրացնելով իր մարտական ընկերոջ վկայությունը՝ կաթնաղբյուրցի Վարդգեսը ավելացնում է. «Նա որպես հրամանատար և որպես զինվոր առաջինն էր: Ինչպիսի գործողություն էլ լիներ, Պետոն գրեթե մշտապես առջևում էր: Նրա այդ պահվածքն ու անձնական օրինակն էր, որ ոգևորում և խրախուսում էր տղաներին»:

Գիշերային մարտերում հարձակվելիս թուրքերը կիրառում են արցախյան պատերազմում մինչ այդ աննախադեպ մարտավարական գործողություններ: Նրանց զինվորները, երկու դասակի կազմով, մոտենում են հենակետին և միաժամանակ, մոտավորապես 60 նռնականետներից կրակ տեղում գումարտակի պաշտպանական դիրքերին: Ընդ որում, նռնականետորդները զենքերը (ռուսական վերջին՝ «ՌՊ-16» տեսակի նռնականետ, որի հարվածի հեռահարությունը հավասար է 1500 մետրի- Հ.Գ.) օգտագործում էին այնպիսի վարպետությամբ, որ թվում էր, թե կարծես կրակում էին ինքնաձիգներից:

Կռիվներ մասնակիցների բնութագրմամբ՝ գիշերային մթության մեջ սուրացող և երբեմն միմյանց բախվող կրակե շապիկով պարուրված նռականատերից արձակված տասնյակ նռնակները մի անպատմելի «գեղեցիկ» տեսարան էին ստեղծում:

Մարտավարական նման եղանակի կիրառմամբ թուրք հրամանատարությունն առավելապես ձգտում է հոգեբանական գրոհներ ձեռնարկել և տասնյակ նռնականետների մեծադղորդ աղմուկով և դիրքերի վրա տեղացող կրակի հեղեղով սարսափ ու խուճապ առաջացնել հայ զինվորների շարքերում: Սակայն հակառակորդի ձեռնարկած ոչ մի ուժ ու մարտավարության ոչ մի նորույթ իզորու չէին ահաբեկելու Պետոյին ու նրա զինվորներին: Նա իր գումարտակով պատրաստ էր դիմագրավելու նաև թշնամու հոգեբանական գրոհներին ևս:

Հունվարի 6-ի լույս 7-ի գիշերը շարունակվող մարտերը ընթանում էին հիմնականում առաջին և 2-րդ հենակետերում և նրանցից աջ դիրքավորված Էռնեստի կրակային դասակի ու Մուկուչի գլխավորած ջոկատների պաշտպանական դիրքերում: Գումարտակի պաշտպանության վերոհիշյալ հենակետերում տղաները մարտնչում էին ուժերի գերագույն լարումով ու աննկարագրելի խիզախումներով: Պետոն հայտնվելով ճակատի մերթ այս մերթ այն հատվածում՝ ոգևորում և հմտորեն ղեկավարում էր զորաջոկատների գործողությունները:

Անդրադառնալով այդ ծանրագույն պահին զինվորների վրա հրամանատարի ունեցած ազդեցության գնահատմանը՝ հրազդանցի Միերը նշում է. «Երբ ինքը կար, մենք կարծես թե թևեր էինք առնում ու թռչում: Հեշտ էր նրա հետ, նրա հրամանատարությամբ... Ինքը կարծես ամբողջ գումարտակի սիրտը լիներ, մի խոսքով՝ մարդկանց կյանք տվող էր...»:

Նռնականետորդների դասակների աջակցությամբ ձեռնարկվող թուրք զինվորների զանգվածային գրոհները փշրվում են՝ հանդիպելով մեր զինվորների երկաթյա պաշտպանությանը: Ամբողջովին խորտակվում է թուրք հրամանատարության կողմից վարձու արհեստավարժների միջոցով իրականացվող մարտավարական այս նորամուծությունը ևս:

Գիշերային մարտում թշնամին կրում էր իր հերթական պարտությունը: Նույնն էր պատկերը մինչև հունվարի 8-ի առավոտյան:

Այդ օրը ռազմաճակատի հրամանատարությունից Պետոյին հայտնի է դառնում, որ թուրքերը մեծ ուժեր կենտրոնացնելով՝ կարողացել են թափանցել իր և ձախ հարևանի՝ Հադրութի գնդի Ռիժիկի գումարտակի արանքը: Ահավոր սպառնալիք է կախվում Պետոյի գումարտակի վրա: Քանի որ աջ կողմը հենց առաջին օրն էր բաց մնացել, ապա ձախ կողմից թուրքերի կտրուկ առաջխաղացման դեպքում ողջ գումարտակն անխուսափելիորեն ամբողջվին կհայտնվեր շրջապատման մեջ:

«... Քանի որ թուրքը, - նշում է Աղաբեկյան Արթուրը, - անցել էր ավելի կազմակերպված հարձակումների և քանի դեռ մնում էին բաց տարածքներ, ապա հնարավոր չէր այդքան մարդկանցով այդ գոտին պահել:

... Երբ արդեն վտանգ էր սպասվում, որ թուրքը Շուքյուրբեյլի, Սեյդահմեդլի, Կարախանբեյլի գյուղերի ճանապարհով կարող էր մտնել մեր մյուս երեք գումարտակների թիկունքը և վտանգի տակ դրվեր Ֆիզուլի քաղաքը, որտեղ մենք էինք նստած, հրամանատարության հետ համաձայնեցրի իմ առաջարկությունը, և կազմակերպեցինք Պետոյենց ու մեր մյուս երեք գումարտակների նահանջը»:

Ստանալով Արթուր Աղաբեկյանի համաձայնությունը՝ Պետոն ձեռնամուխ է լինում գումարտակի զորավաշտերը դիրքերից դուրս բերելու և նահանջը կազմակերպելու խնդիրների կատարմանը: Գումարտակի զինվորների համար այնքան էլ հաճելի չէր թողնել այն դիրքերը, որոնց պաշտպանության համար նրանք մարտնչել էին աննահանջ, ուժերի գերագույն լարումով, գեշեր ու ցերեկ, միայնակ և առանց դույզն ինչ հանգստանալու: Պատերազմական իրավիճակում զորքի նահանջի ճիշտ կազմակերպումն ու նրանց անվտանգությունն ապահովելու վարպետությունը հրամանատարի անվիճելի առավելություններից ու կազմակերպչական տաղանդի լավագույն ապացույցներից են: Տվյալ իրավիճակում Պետոն իր հրամանատարական վարպետությունը պիտի դրսևորեր այս անգամ արդեն գումարտակի անվտանգ ու անկորուստ նահանջը կազմակերպելիս: Գլխավորն այն էր, որ նահանջը ինչպես նախորդ՝ հունվարի 5-ին, շրջանաձև պաշտպանություն կազմակերպելիս, ընթանար խստորեն կազմակերպված, առանց շտապողականության ու խուճապի անպայման բոլոր զորաջոկատների փոխհամագործակցության ապահովմամբ:

Անդրադառնալով հունվարյան կռիվներում Պետոյի գումարտակի գործունեությանը՝ Արթուր Աղաբեկյանը տալիս է հետևյալ գնահատականը. «Համոզված եմ, որ այդ գումարտակից օրինակ վերցրին մեր գումարտակները: Նրանք օրինակ վերցրին Պետոյենց գումարտակից, թե ինչպես կարելի է կռվել պաշտպանվելիս, թե ինչպես կարելի է հետ շպրտել թուրքերին ա-

ռանց խուճապի ու նրանց առաջխաղացումից վախենալու: Այդ օրերին, որպես լավագույն օրինակ, միշտ վկայակոչում էինք այդ գումարտակը»:

Իսկ Հադրութի գնդի գումարտակներից մեկի հրամանատար Վահան Բաղաթյանը, կարծես ավելի զարգացնելով վերոհիշյալ գնահատականը, նշում է. «Իմ կարծիքով, ովքեր ծանոթ են Պետոյենց գումարտակին, համոզված են, որ իր մարտունակությամբ ու կարգապահությամբ այն գերազանցում է Արցախի բոլոր գումարտակներին»:

Եթե ընդհանրացնենք և գնահատենք Պետոյի գլխավորած Շուշիի առանձնակի գումարտակի կռիվների առաջին երեք օրերում դրսևորած գործունեությունը, ապա անվարան կարելի է ասել. թուրք հրամանատարության համար կատարյալ անակնկալ էր ռազմաճակատի այդ հատվածում հայ զինվորների դրսևորած այդօրինակ անխորտակ պաշտպանունակությունը: Թվում է, թե անհավատալի ու հասարակ մահկանացուների ուժերից վեր էր այն, ինչ կատարեց Պետոյի գումարտակը: Երեք օր ու գիշեր կիսաշրջափակված վիճակում՝ անպատմելի խիզախումներով ու երկաթյա պաշտպանությամբ պարտության մատնելով թուրքական հսկայական գերակշռող ուժերին՝ գումարտակը աներեր պահում է ռազմաճակատի գիծը: Այդ օրերի մարտական գործողությունների անաչառ ուսումնասիրությունն ու վերլուծությունը միանշանակ ապացուցում են, որ Պետոյի գումարտակն իր գործունեությամբ իրավամբ արմատական բեկում մտցրեց ռազմաճակատի մարտական գործողություններում: Համեմատաբար արագ հաջողության հասնելով ռազմաճակատի հարավային հատվածում, թուրք հրամանատարությունը հույս ուներ մեծաքանակ ռազմական ուժերի և մարտավարական նոր, դեռևս չկիրառված միջոցների օգտագործմամբ վճռական հաջողություն ձեռք բերել նաև այս ուղղությունում: Սակայն Պետոյի գումարտակն իր անխորտակ պաշտպանությամբ խառնելով թուրք հրամանատարության հաշիվները՝ ձախողում է նրանց ձեռնարկումները և հնարավորություն ընձեռում ԼՂՀ բանակի հրամանատարության համար անհրաժեշտ քայլերի ձեռնարկմամբ կայունացնել և ուժեղացնել այս ուղղության պաշտպանությունը:

Եվ իրոք, եթե Պետոն իր զինվորներով չկարողանար կանգնեցնել թուրքերի հարձակումները, ապա միանգամայն հնարավոր էր, որ պաշտպանության երկրորդ բնագծերի բացակայության պայմաններում զրահամեքենաների աջակցությամբ նրանք ճեղքեին ռազմաճակատի գիծը և գրավելով Ֆիզուլին՝ ԼՂՀ խորքը և բնավ չէր բացառվում նաև Զանգեզուրի տարածք ներխուժելու սպառնալիք ստեղծեին: Այստեղ, ինչպես ընդունված է ասել՝ մեկնաբանություններն ավելորդ են:

1994 թ. հունվարյան կռիվները ևս մեկ փառապանծ ու ուսանելի էջ պարգևեցին Արցախյան Ազատամարտի պատմությանը: Անվարան կարելի

է պնդել, որ չնայած ազերի իշխանությունների գործադրած հսկայական ջանքերին և ի լուր աշխարհի հռչակած ամպագոռգոռ հայտարարություններին, նրանց բազմակողմանիորեն կազմակերպված և տեխնիկապես զերազանց հագեցված բանակը կրել էր իր հերթական ծանր պարտությունը՝ այս անգամ արդեն արցախյան ռազմաճակատի գրեթե բոլոր հատվածներում: Միակ խոցելի տեղը թերևս Քելբաջարի ուղղությունն էր, որտեղ ազերիների զորամիավորումներին հաջողվել էր անցնել Օմարի լեռնանցքն ու հաղթահարելով այդ ճակատում մարտնչող հայկական ուժերի պաշտպանությունը՝ կարողացել էր իր վերահսկողության տակ վերցնել լեռնանցքից մինչև Բաղիրլի, Բուզդուխ, Չիչագլի սարի բարձունքները և դրանցից դեպի հյուսիս-արևելք՝ մինչև Սեիդլյար ընկած տարածքները: Ռազմաճակատի այդ հատվածում թշնամու հետագա առաջխաղացումն անխուսափելիորեն կարող էր բացասաբար անդրադառնալ Արցախի մյուս ճակատներում ծավալվող մարտական գործողությունների ընթացքի վրա: Թուրքերն օգտվելով ընձեռված հնարավորություններից՝ կարող էին առաջանալ Վանք, Բաղլիփեյա, Չարեքտար գյուղերի, ապա դեպի ավելի հարավ՝ Նարեշտար, Վանք բնակավայրերի ուղղությամբ ու տիրելով դեպի Արցախի Հանրապետության տարածքը ձգվող հաղորդակցության կարևորագույն ուղիներին՝ շրջափակման մեջ վերցնել և մեկուսացնել Մարտակերտի ողջ ռազմաճակատը:

Տվյալ իրավիճակում անհրաժեշտ էր արմատական բեկում մտցնել նաև Քելբաջարի հյուսիսում ընթացող մարտական գործողություններում և վճռական ու խելամիտ քայլերի միջոցով հաղթահարելով թուրքական զորքերի դիմադրությունը՝ վերստին վերահսկողության տակ վերցնել մինչև Օմարի լեռնանցքը ձգվող տարածքը: Այդ խնդիրը կենսագործելու նպատակով Արցախի Հանրապետության բանակի հրամանատարությունը Քելբաջարի ռազմաճակատ է տեղափոխում արցախյան մի քանի փորձառու զորամասեր, որոնց թվում նաև Շուշի գումարտակի Ռոմիկի (Մարգարյան Ռոմիկ, ներկայիս գնդապետ՝ ՀՀ ՊՆ թիկունքի վարչության պետ) գլխավորած ջոկատը՝ թվով 15 հոգի:

Այդ ժամանակ գումարտակը գործում էր Պետոյի հրամանատարությամբ:

Ռոմիկի ջոկատը, մինչև Պետոյի Քելբաջար տեղափոխվելը, այդ ճակատում հանդիպում է բազում դժվարությունների: Պարզվում է, որ ռազմաճակատում հաջող մարտական գործողությունների իրականացման համար զորամիասերի միջև անհրաժեշտ փոխհամագործակցությունը տարբեր պատճառներով դեռևս պատշաճ բարձրության վրա չէր գտնվում: Տվյալ իրավիճակում որևէ նշանակալի մարտական գործողություն ձեռնարկելիս փոքրաթիվ ջոկատի ուժերը, առանց օգնական ուժերի ու մյուս զորամիավորումների ճիշտ համագործակցության, անբավարար էին: Իսկ ժամանակի

կորուստը չէր խոսում հոգուտ արցախյան ուժերի: Ստեղծված դժվարին կացությունը հրամայաբար թելադրում էր ձեռնարկել համարձակ ու խելամտորեն հաշվարկված միջոցներ և որքան շուտ, այնքան լավ: Համակողմանիորեն կշռադատելով արդեն ստեղծված կացությունը՝ Ռոմիկը կատարում է տվյալ իրավիճակում թերևս միակ ու ճշմարիտ քայլը. «Ես կապվեցի Պետոյի հետ և ասացի, որ այստեղ գործ չի արվում: Կա՛մ մենք պետք է թողնենք ու հետ գանք, կամ եթե գործ պետք է արվի, ուրեմն ամբողջ գումարտակը պիտի տեղափոխվի այստեղ: Թե չէ, չենք հասկանում, ո՞վ է հրամանատարը, ո՞րն է մեր անելիքը…»:

Ռոմիկից ստանալով Քելբաջարի ճակատում տիրող իրավիճակի մասին վերոհիշյալ տեղեկությունները՝ Պետոն մեկնում է Ստեփանակերտ՝ հանդիպելու Արցախի բանակի հրամանատարին և մինչ կհասցներ նրան շարադրել իր առաջարկությունը, հրամանատարն ինքն է հանձնարարում Պետոյին գումարտակով մեկնել Քելբաջարի շրջան և ձեռնամուխ լինել մարտական շատ կարևոր ու պատասխանատու առաջադրանքի կատարմանը: Առաջադրանքը միակն էր. գումարտակը պետք էր անհապաղ տեղափոխվեր հյուսիսային ճակատ և այնտեղ գտնվող արցախյան մյուս զորամասեր համագործակցությամբ ջախջախեր այդ ուղղության բարձունքներում ու դիրքերում ամրացած հակառակորդի ուժերին և թուրքերից մաքրեր մինչև Օմարի լեռնանցքը ձգվող տարածքը:

Պետք է նշել, որ հունվարյան ծանրագույն փորձությունից հետո գումարտակի զինվորները գրեթե ոչ մի օր ժամանակ չեն ունեցել ինչպես հարկն է նույնիսկ փոքր -ինչ հանգստանալու: Չէր լուծվել նաև նրանց հերթափոխի հարցը: Նախորդ կռիվներում մարտաշարքերը նկատելիորեն նոսրացել էին (տասը զոհ ու երեսունինը վիրավոր - ՀԳ.), իսկ համալրումների խնդիրը, ինչպես և անցյալում, դեռևս մնում էր գումարտակի համար ամենացավոտ ու խոցելի տեղը: Բայց Պետոյի ու նրա զինակիցների համար այլընտրանք չկար:

«Եթե նույնիսկ համոզված լինեմ,- նշում էր Պետոն,- որ մեր կռվի արդյունքները քաղաքական ոլորտներում պետք է շահագործվեն կամ չարաշահվեն, մեկ է՝ ինձ համար այլընտրանք չկա. պե՛տք է կռվենք»

Այո՛, նրա և իր մարտական ընկերների համար այլընտրանք գոյություն չուներ ու անվարան մեկնելով Քելբաջարի ճակատը՝ նրանք մեկ անգամ ևս պիտի ապացուցեին զենքին և ռազմարվեստին տիրապետելու իրենց անբասիր վարպետությունը՝ այս անգամ արդեն հարձակողական գործողությունների ընթացքում: Գումարտակի ուժերը տեղաբաշխվում են Չիչագլի սարից դեպի հարավ-արևելք ձգվող ճանապարհի մերձակայքում, որտեղից Չիչագլիի բարձունքները շատ լավ երևում էին: Այդ ժամանակ բարձունքների երեք հիմնական հենակետերից երկուսը գտնվում էին թուրքերի,

իսկ մեկը՝ արցախյան մարտիկների վերահսկողության ներքո: Մինչև Շուշիի առանձնակի գումարտակի այստեղ տեղափոխվելը՝ արցախյան զորամասերի կողմից եղել են Չիչագլիի բարձունքները գրավելու փորձեր, որոնք ավարտվել էին անարդյունք: Պետոն դեռևս չէր հասցրել ինչպես հարկն է տեղաբաշխել գումարտակի ուժերը, երբ թուրքերը գրավում են նաև արցախյան մարտիկների հսկողության տակ գտնվող հենակետը:

Այդ վիճակում բարձունքը միայն եղած ուժերով, հանպատրաստից վերցնելու փորձը վտանգավոր էր ու գրեթե անհնարին: Քանի որ հակառակորդի զինվորների տեսադաշտը բաց էր, ապա նրանք կարող էին, առանց մեծ ջանքեր գործադրելու, բարձունքներում տեղադրված գնդացիրներով ճշգրտորեն հարվածել հարձակվողներին ու մեծ կորուստներ պատճառել:

Չիչագլիի վերջին բարձունքը թշնամուն հանձնելը տհաճ, բայց արդեն կատարված իրողություն էր: Քանի որ Չիչագլիի այդ բարձունքից շատ հեռու չէր գումարտակի տեղաբաշխման վայրը, ապա թուրքերը, նոր վերցրած հենակետում ամուր դիրքավորվելուց հետո, կարող էին կրակի տակ վերցնել ողջ գումարտակը: Այդ սպառնալիքից խուսափելու համար Պետոն հարկադրված գումարտակը տեղաբաշխում է այնպիսի վայր, որտեղից Չիչագլի սարն այլևս չէր երևում:

Ի՞նչ պիտի արվեր:

Նախ, հարկավոր էր պահպանել զինվորների մարտունակությունը, թույլ չտալ, որպեսզի նրանք մրսեն ու հիվանդանան:

Քանի դեռ մարտական գործողությունները չէին սկսվել, դեռևս գտնվում էին նախապատրաստական փուլում, Պետոն, գումարտակի զինվորներին ցրտահարությունից, ինչպես նաև հոգնածությունից զերծ պահելու նկատառումով հրահանգում է զորաջոկատներին պարտադիր կարգով, ամեն օր կատարել լիցքային վարժություններ, առավոտյան անպայման վազել ու ոչ մի դեպքում անգործության չմատնվել:

Չնայած եղանակի անտանելի դժվարություններին, գումարտակի մարտիկները շնորհիվ կատարած ամենօրյա լիցքային վարժությունների՝ հաջողվում է խուսափել սառցչելուց ու հիվանդանալուց և կարողանում են պահմանել իրենց մարտունակությունը, իսկ թուրքերից շատերը, ինչպես պարզվեց հետագայում, ցրտահարվել էին ու մնացել բարձունքներում:

Երկրորդ, անհրաժեշտ էր պարզել տեղանքի ընդհանուր յուրահատկությունները, բարձունքում տեղաբաշխված հակառակորդի դիրքերի և այնտեղ եղած ուժերի իրական դասավորվածությունն ու մանրամասները: Երկաթյա օրենք էր՝ մինչեւ որեւէ գործողություն ձեռնարկելը Պետոն ինքը պետք է գնար հետախուզության և անձամբ ուսումնասիրեր բոլոր այն նրբությունները, որոնց համակողմանի վերլուծությունն ու իմացությունը

անհրաժեշտ էին մարտական գործողությունները հաջողությամբ մշակելու և իրականացնելու համար:

Տեղանքը շատ բարդ կառուցվածք ուներ: Լեռնագագաթներում բուք էր, իսկ ներքևում լեռնալանջերը պատված էին մինչև կես մետր հաստության ձյան շերտով: Լեռնաշղթայի վրա, կարծես մեկը մյուսին հաջորդող ու լրացնող բազմաթիվ բլուրները վերածելով պաշտպանական հարմարավետ հենակետերի, թուրք հրամանատարությունը փաստորեն նաև բնական ամրակուռ պարիսպներով էր կասեցնում արցախյան ուժերի առաջխաղացումը: Ճիշտ է, մասնակիցների վկայությամբ՝ թուրքերի ուժերն այնքան էլ բազմաքանակ չէին, բայց տիրելով տեղանքի իշխող բարձունքներին՝ նրանք ձեռք էին բերել դիրքային շատ մեծ առավելություն: Արցախյան զորամասերի արդյունավետ գործողություններին զգալի չափով խոչընդոտում էր նաև այն, որ նրանց հարձակման գոտում, մինչեւ թուրքերի գրաված դիրքերը, ընդհատվում էր անտառային շերտը, իսկ բաց դաշտում բարձունքների վրա հարձակում գործելն անհամեմատ դժվարին խնդիր է: Պաշտպանության նման հզոր համակարգը խորտակելու համար անհրաժեշտ էր ուժերի հարաբերակցության ճշգրիտ հաշվարկ, մարտավարական ճկունություն, անսպասելի հարվածներ և, իհարկե, ֆիզիկական ահռելի ուժերի ներդրում: Թվում էր, թե իրոք դիրքային անվիճելի առավելություն ունեցող հակառակորդի պաշտպանական դիրքերի խորտակումը անիրականանալի խնդիր է, բայց Պետոն պատրաստ էր հաղթահարել նաև այդ մակարդակի դժվարությունները եւ իզուր չէ, որ նա հաղթանակող հրամանատարի անուն էր վաստակել:

«Սարերը չափչփելու ժամանակ,- վերհիշում է երգիչ-ազատամարտիկ Մակիչը,- Պետոն նայեց, նայեց թուրքերի դիրքերին և ասաց. «Մկո՛, ի՞նչ ենք անելու, այստեղ անելու գործ չկա»:

Պարզվում է, որ թուրքերը, հիմնական ուշադրությունը բեւեռելով Չիչագլիի բարձունքներին, անընդհատ նորանոր ուժերով համալրում ու ուժեղացնում էին այդ հենակետերը: Տվյալ իրավիճակում դա շատ կարեւոր և նուրբ հանգամանք էր, որի նշանակությունը Պետոն անմիջականորեն նկատում է ու պատշաճորեն գնահատում: Բազմակողմանիորեն հաշվարկելով ստեղծված կացության նրբությունները՝ նա համաձայն Մակիչի, որոշում է. «Բոլորը սպասում են, որ մենք առաջին հերթին այդ բարձունքները (նկատի ունի Չիչագլի սարի վրա թուրքերից վերահսկվող երեք բարձունքները – Հ. Գ.) կվերցնենք, որպեսզի տիրենք ու նոր առաջանանք: Բայց մենք ուրիշ բան կանենք. կկտրենք դեպի սարը ձգվող ճանապարհը և նրանք կորցնելով թիկունքի հետ կապող հաղորդակցության ուղին՝ կհայտնվեն շրջափակման մեջ»:

Խնդրի լուծման գաղտնիքը հայտնի էր: Պետոն գումարտակի սպայակույտի պետ Ռոմիկի, որը նույնպես համանման մարտավարությամբ գործելու կողմնակիցն էր, ուղեկցությամբ մեկնում է Վանք գյուղ՝ ռազմական խորհրդում ներկայացնելու մարտական գործողության հենց այդ տարբերակը:

«Առաջարկեցինք, - նշում է Ռոմիկը, - որ սարը թողնենք մեր թիկունքում, հենակետեր դնենք, որ նրանք չիջնեն սարից ու մեր ճանապարհը փակեն: Առաջարկեցինք այդտեղ պաշտպանություն դնել, որ նրանք չիջնեն եւ աշխատենք մյուս բարձունքների, մասնավորապես՝ 2071-ի վրա: Եթե գրավեինք այդ բարձունքը, ապա կփակվեր դեպի Չիչագլի սարը տանող ճանապարհը և այնտեղ այլև ոչ մի մեքենա ու տեխնիկա չէր կարող գնալ: Օգնության ճանապարհը փակում էինք, ու եթե կարողանայինք գոնե մի երկու օր պահել, ապա նրանք ստիպված կլինեին սարից իջնել: Ձմեռ էր ցուրտ, եթե նրանց փոխարինելու, սննդի հարցը չկազմակերպվեր, ապա նրանք բնականաբար չէին կարողանա այնտեղ մնալ»:

Փաստարկը միանգամայն տրամաբանական էր ու հիմնավորված, և ռազմական խորհուրդը, հուրախություն Պետոյի և Ռոմիկի, ընդունում է հենց այդ առաջարկությունը:

Խորհրդակցելով իր գումարտակի զինջոկատների հրամանատարների հետ՝ Պետոն վճռում է գործողությունը իրականացնել հետևյալ ուղղվածությամբ. ամենից առաջ անհրաժեշտ էր օգտագործել 2071 բարձունքի դիմացի հենակետում տեղաբաշխված Մամիկոնի (Կալոյան Մամիկոն, Թիֆլիսից) ու Մանուկյան Դավիթի գլխավորած զորախմբի մարտիկներին: Նրանք, մինչ այդ, իրենց գլխավորած մարտիկներով մի քանի անգամ այդ հենակետում լավ ջարդ էր տվել թուրքերին ու մանրակրկիտ հետախուզել ու ուսումնասիրել էր տեղանքը և շատ լավ ծանոթ էին նրա յուրահատկություններին: Այդ զորախմբին հանձնարարվում է իր հենակետից առաջանալ ու աջ կողմից հարձակվելով թուրքերի դիրքերի վրա՝ գրավել դրանք և շարժվել դեպի բարձունքի կենտրոնը:

Հարկ է նշել, որ այդ զորախմբի ողջ անձնակազմն առանց բացառության ընտրագույն ռազմիկներ էին՝ մարտական հարուստ կենսագրությամբ, ֆիզիկական հրաշալի կոփվածքով, իրենց ուժերին ու կարողություններին վստահ, հոգով՝ ուժեղ ու ինչպես ընդունված է ասել՝ կես խոսքից իրար հասկացող:

Պետոն քաջատեղյակ էր զորախմբում ընդգրկված տղաների մարտական կարողություններին և ավելի քան համոզված, որ նրանք այս անգամ էլ լավագույնս կկատարեն առաջադրանքը:

Մամիկոնի զորախմբի շարժմանը զուգընթաց՝ Պետոն գրոհի համար նախատեսված երկրորդ խումբը պիտի առաջնորդեր ներքևում գտնվող եր-

կու մեծ բլուրների միջև ձգվող ձորերով ու աննկատ առաջանալով՝ մոտենար 2071 բարձունքին:

Տեղանքի ու հակառակորդի դիրքերի մանրակրկիտ ուսումնասիրության շնորհիվ Պետոն որոշում է, որ առավել արդյունավետ գործելու համար պետք է համեմատաբար փոքրաքանակ ուժերով ծավալել հարձակումը: Նման որոշումը շատ կարեւոր էր ու խորապես կշռադատված: Քանի որ թուրքերի դիրքերից, մասամբ նաև անտառաշերտերի ընդհատվելու պատճառով, տեսադաշտը բաց էր, եւ ամեն մի շարժում շատ լավ տեսանելի, ուստի մեծաքանակ ուժերով գրոհը կարող էր տեղի տալ ավելորդ և անհարկի խառնաշփոթությունների ու բարդությունների, և որ ամենաանցանկալին է, զոհերն ավելի շատ կարող էին լինել: Իսկ նվազագույն կորուստներով որևէ գործողություն իրականացնելը նրա համար առաջնահերթ նշանակություն ուներ:

Նրա մտահղացմամբ՝ մարտական ուժերի փոքրաքանակությունը պիտի փոխհատուցվեր ի հաշիվ արագ տեղաշարժերի, անսպասելի հարվածների և հակառակորդին ապակողմնորոշելու ու նրանց շարքերում առաջացած խուճապի:

Մարտական գործողություններին մասնակցելու համար նա ընտրում ու կազմում է երկու ջոկատ: Առաջին ջոկատում, իհարկե, տեղանքին քաջածանոթ Մամիկոնի գլխավորած ջոկատի մարտիկներն էին, իսկ երկրորդում՝ Սմբատի (Մանուկյան Ռազմիկ, ք. Հրազդան) գլխավորած վաշտի 25 - 30 առավել փորձառու զինվորները:

Գումարտակի հիմնական ուժերը թողնելով ռեզերվում՝ Պետոն այդ փոքրաքանակ ուժերով, արցախյան զորամսերի համագործակցությամբ, ձեռնարկում է մի այնպիսի մարտական գործողություն, որի արդյունավետ իրագործման դեպքում Արցախի բանակի տնօրինության ներքո պիտի դարձյալ հայտնվեին մինչեւ Օմարի լեռնանցքն ընկած տարածքները:

Փետրվարի 11-ին, ըստ մշակված ծրագրի, սկսվում է արցախյան մարտական ուժերի հարձակումը: Առաջին հաջողությունները, հարձակումից մի փոքր անց, նկատվում են աջ թեւում, ուր գործում էին Մարտակերտի ու Ստեփանակերտի զինջոկատները: Գումարտակի գրոհող զորախմբերին կրակով աջակցելու համար Պետոն հրամայում է բարձունքներից մեկի վրա տեղադրել գնդացիրները, այդ թվում՝ նաև հաստոցավոր «ԴՇԿ» և «ԱԳՍ», ու տեղացող հարվածներով թուրքերին գամել իրենց խրամատներում:

Սրընթաց գրոհով խորտակելով հակառակորդի դիմադրությունն ու սարի աջ կողմից բարձրանալով և մեկը մյուսի հետևից մաքրելով թուրքերի հենակետերը՝ 2071 բարձունքի կենտրոնին է մոտենում Մամիկոնի զորախումբը: Պետոն անձամբ առաջնորդելով մյուս զորախումբը՝ ճակատային գրոհով հաղթահարում է խոչընդոտող արգելքները, դեռ մութը չընկած՝

բարձրանում է սարի կենտրոնն ու միանալով Մամիկոնի տղաներին՝ դիրքավորվում գրավված հենակետերում: Առաջին օրվա մարտերի արդյունքները գերազանց էին: Երկու ուղղությամբ՝ աջից ու կենտրոնից ձեռնարկած հարձակումներով գումարտակի գրոհային ջորախմբերն առանց զոհերի ու անգամ առանց վիրավորների, գրավում են 2071 բարձունքը և մաքրելով այդ տարածքը թուրքական ուժերից, պատրաստվում հաջորդ օրն ևեթ, զարգացնելու առաջխաղացումը:

«Մենք,- նշում են գրոհի մասնակիցները,- կարող էինք բարձունքը գրավել նույնիսկ ցերեկը, բայց այդ դեպքում, քանի որ թուրքերի դիրքերից մեր տեղաշարժերը պարզորոշ երևում էին, ապա նրանք կարող էին դիպուկ հարվածներ տեղալ մեզ վրա և զգալի կորուստներ պատճառել հարձակվողներիս: Ահա այդ կարևոր հանգամանքը հաշվի առնելով՝ Պետոն որոշեց զուտ մեր անվտանգությունն ապահովելու և զոհեր տալուց խուսափելու նպատակով բարձունքը գրոհել երեկոյան: Այդպես էլ եղավ, մենք ցերեկով մոտեցանք բարձունքին, և երբ մութն ընկավ, ու փակվեց թուրքերի տեսադաշտը՝ լուսարձակ գնդակների արձակած հրացոլքերի ուղեկցությամբ գրոհեցինք բարձունքը և գրավեցինք այն»:

Առանց մեծ ջանքերի, Պետոն կարողանում է շնորհիվ ճիշտ մարտավարության ու արագ տեղաշարժերի՝ ապակողմնորոշել հակառակորդին և նրան թելադրել իր կամքը: Չիչագլի սարի հենակետերում դիրքավորված թուրքական հիմնական խմբավորումը, կտրվելով հաղորդակցության ուղիներից, հայտնվում է շրջափակման մեջ:

Հարձակման առաջին օրվա արդյունքներն ավելի քան գերազանց էին:

Աջ թեւում Մարտակերտի Արշոյի գումարտակը գրավում է Բաղրլուի բարձունքները: Իրենց առաջադրանքները շատ լավ են կատարում նաև Ստեփանակերտի գնդի և Իլյիչի գլխավորած գումարտակի զինվորները: Հենց առաջին օրվա ձեռք բերած փայլուն հաղթանակներով արմատական բեկումը ռազմաճակատի հիշյալ հատվածում արդեն նվաճված էր: Անհրաժեշտ էր այն արագորեն զարգացնել ու ամրապնդել:

Ըստ կայացած համաձայնության՝ Պետոն թիկունքն ապահովելու համար սարի վրա թողնում է մի փոքրիկ խումբ ու հիմնական ուժերով իջնելով բարձունքներից՝ հարձակվում է Բաղրսաղ, ապա Յանշաղ գյուղերի ուղղությամբ, ուր պետք է միանար Արշոյի առաջնորդած գումարտակին:

Հարկ է նշել, որ Չիչագլի սարում գտնվող թուրքական հենակետերը, հայտնվելով թիկունքում, մեկուսացվել էին ու արդեն ոչ մի վտանգ չէին ներկայացնում: Դեպի Բաղրսաղ գյուղը ձգվող ճանապարհներն ու բլուրները թուրքերը բավականին լավ ամրացրել էին: Սարից մինչև գյուղն ընկած տարածությունը հաղթահարելու համար գումարտակը պետք է կոտրեր այդ

տարածքում տեղաբաշխված թուրքական առանձին հենակետերի դիմադրությունը: Պետոն դարձյալ կազմակերպում է հակառակորդի դիրքերի հետախուզումը ու նոր միայն ջոկատներն առաջնորդում գրոհի: Պարզվում է, որ թուրք զինվորները մի քանի դիրքեր արդեն թողել էին, խուճապն ընդգրկել էր ողջ ռազմաճակատը: Շուտով Չիչագլիի լեռնագագաթներում կործանման դատապարտված թուրքերը, հայտնվելով անելանելի վիճակում,՝ ճարահատյալ փոքր խմբերով լքում են դիրքերը: Լեռնալանջերից դեպի գյուղն ընկած ճանապարհների վրա թուրքերին «դիմագրավելու» նպատակով՝ Պետոն փոքր խմբերի մասնակցությամբ կազմակերպում է ծուղակ:

Թուրքերի դիմադրությունը գնալով նվազում էր: Նույնիսկ այն տարածքներում, ուր դեռևս գործում էին հակառակորդի հենակետերը, թուրքերը արցախյան ուժերի առաջին իսկ հարվածներից սարսափահար լքում են դիրքերը: Պետոն մեկը մյուսի հետևից հաղթահարելով թուրքերի պաշտպանական դիրքերի դիմադրությունը՝ արագորեն մոտենում է Բաղրսաղ գյուղին: Թուրք զինվորները, գյուղում թողնելով զգալի քանակությամբ մարտական տեխնիկա, հասցնում են փախչել:

Գումարտակի կողմից գրաված 2071 բարձունքից ներքև, դեպի հյուսիս-արևմուտք, Բաղրսաղ գյուղն է: Այդ գյուղի միջով և 2071 բարձունքի հարևանությամբ անցնում է գումարտակի ուժերի կողմից չվերահսկվող միակ ճանապարհ-միջանցքը: Սարից ու բարձունքներից դեպի մյուս կողմերը ձգվող հնարավոր գրեթե բոլոր ուղղություններում տեղաբաշխված աննկատելի «ծուղակ հենակետերում» ամուր «նստել էին» բուժականցի Մուրադի գլխավորած դասակի և գումարտակի պահեստային զորաջոկատների մարտիկները: Համաձայն գործողության մարտավարության շրջափակման մեջ հայտնված թուրքերը սարալանջերում եւ բարձունքներում գտնվող հենակետերը լքելու դեպքում անպայմանորեն պետք է անցնեին Բաղրսաղ գյուղով անցնող միջանցքով, իսկ հակառակ պարագայում կա՛մ բաժին կդառնային «ծուղակ հենակետերում» դիրքավորված մարտիկներին, կամ էլ, եթե ծայրահեղ դեպքում փորձեին մնալ հենակետերում, ապա անխուսափելիորեն բաժին կդառնային ցրտին, սառնամանիքին ու սովին:

Պետոն գումարտակին առաջնորդում է գյուղ և առանց որևէ լուրջ դիմադրության հանդիպելու՝ գրավում այն: Գյուղը լքելիս թուրքերը այնտեղ թողնում են զգալի քանակությամբ զինամթերք և տեղի բնակիչներից մի քանիսին: Գերեվարած թուրքերին ու ռազմավարը Արցախի բանակի տնօրինությանը հանձնելուց և մի փոքր հետախուզություն իրականացնելուց ու տեղանքն փոքր-ինչ ուսումնասիրելուց հետո Պետոն գումարտակով շարունակում է առաջխաղացումը:

Թուրքերի կողմից դիմադրություն փորձ գրեթե չէր նկատվում: Թուրքական ուժերը, Արցախյան զորամասերի հարվածներից մազապուրծ՝ լքում

են իրենց դիրքերը և անցնելով Օմարի լեռնանցքը՝ Արցախի բանակի մարտիկների տնօրինությանը հանձնում լեռնաշղթայի ամրակուռ բարձունքները: Պետոն այս անգամ ևս, իր գլխավորած գումարտակով հրաշալիորեն է կատարում մարտական հույժ կարևոր առաջադրանքը: Գործելով ռազմաճակատի գլխավոր ուղղություններից մեկում՝ նրա գլխավորած զինվորները արցախյան զորամասերի համագործակցությամբ ջախջախում են Արցախը աքցանի մեջ վերցնելուն նպատակաուղղված Ադրբեջանի բանակի զորախմբերին ու նրանցից մաքրելով մինչև Օմարի լեռնանցք ընկած տարածքը՝ հուսալիորեն ամրապնդում Արցախի Հանրապետության հյուսիսային սահմանը:

Այս գործողություններից հետո ճակատի առաջավոր դիրքերը թիկունքից արդեն զգալիորեն հեռացել էին: Լեռնալանջերին դիրքավորված մարտիկներին անհրաժեշտ էր ժամանակին ապահովել սնունդով ու տաք հագուստով: Իր զինվորների պահանջներն ու կարիքները ժամանակին բավարարելու և հոգալու խնդիրները Պետոյի համար ամենաառաջնահերթն ու կարևորագույններից, և մինչև խորապես չհամոզվեր, որ դիրքերում գտնվող զինվորներն ապահովված են բոլոր անհրաժեշտ միջոցներով, չէր կարող իրեն հանգիստ զգալ:

Թիկունքն առաջավոր դիրքերին կապող ասֆալտապատ միակ ճանապարհը, որն անցնում էր Յանշաղ ու Ղամիշլի գյուղերով, ձյան պատճառով տեղ-տեղ դեռևս խցանված էր: Անհրաժեշտ էր բացել այդ ճանապարհը և ժամանակին լուծել դիրքերում գտնվող զինվորների մատակարարման խնդիրները: Պետոն փետրվարի 14-ին այդ նպատակով Յանշաղից իջնում է Ղամիշլի, ապա շարժվում դեպի Գյանջա-Քէալբաջար ճանապարահատվածին խաչմերուկի ուղղությամբ: Գյանջա տանող ճանապարհին, խաչմերուկից 6-7 կմ հեռավորության վրա հանդիպում է շտապ օգնության մեքենայի ու նրա շուրջը խմբված զինվորների պատմածներից տեղեկանում, որ նրանց հանձանարարված է մարտադաշտից դուրս բերել Արցախի բանակի այդտեղ մնացած վիրավոր զինվորներից մեկին: Բայց քանի որ ճանապարհը թուրքերի կողմից ականապատված էր, ապա շտապ օգնության մեքենայի սպասարկող անձնակազմը, երկյուղելով ողբերգական հետևանքներից, չէր համարձակվում առաջ շարժվել, իսկ մարտադաշտում նրանց օգնությանն էր սպասում վիրավոր զինվորը:

Հայրենյաց նվիրյալ զինվորը, չնայած սպառնացող ստույգ վտանգին, չէր կարող անտարբեր լինել զինակիցներից օգնություն հայցող, մարտադաշտում միայնակ մնացած մարտիկի նկատմամբ: Նա վարորդի փոխարեն անվարան նստում է շտապ օգնության մեքենայի ղեկին ու միայնակ շտապում վայրկյան առաջ մարտադաշտից դուրս բերելու վիրավոր մարտիկին: Մի քանի ակնթարթ անց լսվում է պայթյունը, և ականի բեկորներից խոցված

Պետոն կնքում է իր մահկանացուն, իսկ հաշված րոպեներ անց այդ նույն ճանապարհով մեքենաներով, արդեն անարգել, անցնում էին արցախյան բանակի զինվորները:

Гамлет Геворгян, Героические эпизоды Арцахской освободительной войны (Январь-февраль 1994 г.) - В статье показан специальный батальон героических сражений во время Освободительной войны в Арцахе (военные действия Физулинского фронта и возвращение Омара) во главе с героем Арцаха Пето (Петрос Хевондян) в январе и феврале 1994 года. Показано, что имеет неоценимый вклад для провала азербайджаской апмии с целью очепедной оккупации Арцаха.

Hamlet Gevorgyan, Heroic episodes of Artsakh Liberation War (January-February 1994) - There is introduced in the article the special battalion heroic battles during Artsakh liberation war (the military actions of Fizuli front and the recapture of Omar) headed by Artsakh hero Peto (Petros Khevondian) on january and february 1994. There is indicated they had invaluable contribution to fail the Azerbaijan army next attack for occupying Artsakh.